ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հունիսի 25-ից 29-ը Լիտվայի Հանրապետություն (ք. Վիլնյուս) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ</u>**

   Արտակ Պապյան
   Տիգրան Գասպարյան
   Դիանա Անանյան
   Նվարդ Մանուկյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ</u>**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետ, վարչության պետի տեղակալ, գլխավոր մասնագետ և Արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>**

   Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս հունիսի 25-29-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Լիտվայի տրանսպորտային անվտանգության ադմինիստրացիա

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>**

   Մասնակցություն «Անվտանգ տրանսպորտային համակարգ Հայաստանում, III» ճանաչողական դասընթացին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   Լիտվայի Հանրապետության տրանսպորտի նախարարության և տրանսպորտային անվտանգության ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ քննարկվել են ԵՄ-ի հետ օրենսդրության մոտարկման, ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման դեպքում պետության կողմից վերահսկողական մեխանիզմների կիրառման սկզբունքների, ինչպես նաև տարբեր ռելսամիջյան լայնության երկաթգծերի միացման վայրում համակցված կայարանների ուսումնասիրության հարցերը: Ծանոթացման նպատակով կազմակերպվել են շրջայցեր Վիլնյուսի երկաթուղային կայարան, ուղևորափոխադրումներ իրականացնող օպերատորի գրասենյակ, ք, Կաունասում՝ կոնտեյներային տերմինալ, որոնց վերաբերյալ իրականացվել են համատեղ քննարկումներ և փորձի փոխանակում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Մասնակցել ենք Լիտվայի տրանսպորտային անվտանգության ադմինիստրացիայի կողմից կազմակերպված դասընթացներին և ծանոթացել ներկայացված զեկույցներին և սահիկաշարերին: Լիտվայի Հանրապետության տրանսպորտի նախարարության ներկայացուցչի հետ քննարկել ենք ՀՀ օրենսդրությունը հնարավորինս ԵՄ օրենդրությանը ներդաշնակեցնելու վերաբերյալ հարցերը և Լիտվայի Հանրապետության կողմից նշված գործընթացների անցկացման կարգը: Ուղևորափոխադրումներով զբաղվող օպերատորի ներկայացուցիչների հետ քննարկել ենք ուղևորափոխադրումների արդյունավետ կազմակերպման հարցերը և զարգացման հնարավորությունները:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Պաշտոնական հանդիպում ենք ունեցել Լիտվայի տրանսպորտային անվտանգության ադմինիստրացիայի տնօրեն Գ. Լուկոսիուսի և ղեկավար կազմի հետ: Առաջացած հարցերի վերաբերյալ ստացել ենք խորհրդատվական օժանդակություն տրամադրելու նրանց պատրաստակամությունը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Որոշվել է ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ամփոփումը իրականացնել կայանալիք վերջնական հանդիպման ժամանակ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

Ա. Պապյան

Տ. Գասպարյան

Դ. Անանյան

Ն. Մանուկյան

02 հուլիսի 2024թ.